

Հայ Աւետարանական Բեթել Երկրորդական Վարժարանի Մանկապարտեզի Վերանորոգման Բացման Հանդիսութիւն

Կիրակի 25 Նոյեմբեր 2012-ին, Հայ Աւետարանական Բեթել Երկրորդական Վարժարանէն ներս, տեղի ունեցաւ Հայ Աւետարանական Բեթել Երկրորդական Վարժարանի մանկապարտեզի վերանորոգման բացման պաշտօնական հանդիսութիւնը, հովանաւորութիամբ՝ Սուրիոյ Հայ Աւետարանական Համայնքի Համայնքապետ՝ Վեր. Յարութիւն Սելիմեանին, նախաձեռնութեամբ՝ Սուրիոյ Հայ Աւետարանական Կրթական Խորհուրդին: Հանդիսութեան իրենց ներկայութիւնը բերին հոգեւոր հովիւներ, վարժարաններու տնօրէններ, մշակութային բարեսիրական միութիւններու ներկայացուցիչներ, ուսուցիչներ ու ծնողներ: Բացման խօսքով հանդէս եկաւ օրիորդ Վարդենի Խուտեցեան՝ Սուրիոյ Հայ Աւետարանական Համայնքի Կրթական Խորհուրդի գործավարուհի, բարի գալուստի մաղթանքներ փոխանցելէ ետք՝ Վեր. Սերոբ Մկրտիչեան՝ Սուրիոյ Հայ Աւետարանական Համայնքի փոխ համայնքապետ կատարեց բացման աղօթքը:



Վերապատուելի Համայնքապետ Յարութին Սելիմեանի առաջնորդութեամբ, Սուրիոյ Հայ Աւետարանական Կրթական Խորհուրդին ու վարժարանիս զոյգ տնօրէնուհիներուն ուղեկցութեամբ՝ ներկաները, շրջագայելով ծանօթացան մանկապարտեզի վերանորոգուած դասարաններուն, խաղավայրին ու այլ բաժնեմասերուն: Ապա Վերապատուելի Համայնքապետ հանդէս եկաւ փոխանցելու իր սրտին խօսքն ու կատարուած վերանորոգման առաքելութեան անհրաժեշտութիւնը: Ան նախ հակիրճ կերպով անդրադարձաւ, թէ ինչպէ՛ս հայ ժողովուրդը յաճախ ապրած է դժուար պայմաններ, սակայն հակառակ այդ խոչընդոտալի ճակատագրին մի՛շտ մնացած է լայնախոհ, ստեղծագործ ու ծաղկուն: Վերապատուելի Համայնքապետ շարունակեց իր խօսքը ըսելով թէ. «Սոյն վերանորոգմամբ կը փորձենք թարմացնել յառաջիկայ սերունդներուն յիշողութեան մէջ նախնիներուն նիւթաբարոյական ասանդը ու կը տգնինք անոնց միտքն ու հոգին ջամբել հայեցի կրթութեամբ, քրիստոնէկան դաստիարակութեամբ եւ հայ ժողովուրդի միասնական գօրութեամբ, յաղթանակի եւ ազգային վերելքի գաղափարներով»: Խօսքին աւարտին Վերապատուելի Համայնքապետը յատկապէս շնորհակալութիւն յայտնեց Հայ Աւետարանական Եկեղեցիներու Միութեան կեդրոնական մարմինին, Համայնքային գործադիր մարմինին, ինչպէս նաեւ բոլոր անոնց, որոնք նեցուկ կանգնեցան սոյն առաքելութեան իրագործման աշխատանքին ի խնդիր:



Հանդիսությունը ընթացաւ սրտի խօսքերու փոխանակումով, որոնց յաջորդեց կարկանդակի հատումն ու շնորհաւորանքները:

Ընտանիքի զօրութիւնը ազգին զօրութիւնն է: Իսկ ազգին զօրութիւնը, կրթական հաստատութիւններէն ներս, սերունդներուն գիտակցութեան մէջ զայն արմատացնելն է:

Տիկ. Ազնիւ Ստեփանեան-Արապաճեան